



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

АГЕНТСТВО ИНТЕЛЛЕКТУАЛЬНОЙ СОБСТВЕННОСТИ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ՏԵՂԵԿԱԳԻՐ

ОФИЦИАЛЬНЫЙ
БЮЛЛЕТЕНЬ

№ 5

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ПРОМЫШЛЕННАЯ СОБСТВЕННОСТЬ

Սույն տեղեկագրում
գետեղված տեղեկությունները
համարվում են հրապարակված 2012 թվականի մայիսի 25-ից

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ԳՅՈՒՏԵՐ	4, 70
<i>Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին</i>	<i>6, 72</i>
ՕԳՏԱԿԱՐ ՄՈԴԵԼՆԵՐ	12, 77
<i>Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին</i>	<i>14, 79</i>
ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ	16
<i>Տեղեկություններ գրանցված ապրանքային և սպասարկման նշանների մասին</i>	<i>18</i>
<i>Տեղեկություններ ապրանքային նշանների գրանցման գործողության երկարաձգման մասին</i>	<i>62</i>
ՑՈՒՑԻՉՆԵՐ	63
ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	66
ԵՐԿՏԱՌ ԿՈԴԵՐԸ	81

Հրատարակվում է Մտավոր սեփականության
գործակալության կողմից 1995թ.

0010, Երևան, Գլխավոր պող., Կառավարական տուն 3
Հեռ. 563-258 հայտերի ընդունման բաժին
Հեռ. 561-126 տեղեկատվական-տեխնոլոգիական
ապահովման բաժին

Издается Агентством интеллектуальной
собственности с 1995г.

0010, Ереван, Главный проспект, Дом Правительства 3
Тел. (374 10) 563-258 отдел приема заявок
Тел. (374 10) 561-126 отдел информационно-
технологического обеспечения

СОДЕРЖАНИЕ

ИЗОБРЕТЕНИЯ.....	4, 70
Сведения о выданных патентах.....	6, 72
ПОЛЕЗНЫЕ МОДЕЛИ.....	12, 77
Сведения о выданных патентах.....	14, 79
ТОВАРНЫЕ ЗНАКИ.....	16
Сведения о зарегистрированных товарных знаках и знаках обслуживания	18
Сведения о продлении действия регистрации товарных знаков.....	62
УКАЗАТЕЛИ.....	63
СООБЩЕНИЯ.....	65
ДВУБУКВЕННЫЕ КОДЫ.....	81

CONTENTS

INVENTIONS.....	4, 70
Information on granted patents.....	6, 72
UTILITY MODELS.....	12, 77
Information on granted patents.....	14, 79
TRADE MARKS.....	16
Information on registered trade marks and service marks	18
Information on renewal of trademark registration validity	62
INDEXES.....	63
REPORTS.....	65
TWO-LETTER CODES.....	81

ԳՅՈՒՏԵՐ

Գյուտերին վերաբերող մատենագիտական տվյալների նույնականացման միջազգային կոդերը ըստ ՄՍՀԿ ST.9 ստանդարտի

- 11** արտոնագրի համարը
- 13** փաստաթղթի տեսակի կոդը
A գյուտի արտոնագիր
B արտոնագրաունակության մասին եզրակացություն
- 21** հայտի համարը
- 22** հայտի ներկայացման թվականը
- 23** ցուցահանդեսային առաջնության թվականը
- 31** առաջին հայտի համարը
- 32** առաջին հայտի ներկայացման թվականը
- 33** երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջին հայտը
- 45** գյուտի արտոնագիր տալու մասին տեղեկությունների հրապարակման թվականը
- 51** միջազգային արտոնագրային դասակարգման (ՄԱԴ) ցուցիչը(ները)
- 54** գյուտի անվանումը
- 56** տեղեկատվության աղբյուրներ
- 57** գյուտի ռեֆերատը կամ հավակնության սահմանումը
- 62** ավելի վաղ ներկայացված հայտի համարը և ներկայացման թվականը, որից զատված է տվյալ հայտը
- 71** հայտատուն, երկրի կոդը
- 72** գյուտի հեղինակը (ները), երկրի կոդը
- 73** արտոնագրատերը, հասցեն, երկրի կոդը
- 74** արտոնագրային հավատարմատար
- 85** միջազգային հայտի (PCT) ազգային փուլ անցման թվականը
- 86** միջազգային հայտի (PCT) համարը և ներկայացման թվականը
- 87** միջազգային հայտի (PCT) հրապարակման համարը և թվականը

Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին

- (51) **(2012.01)** (11) **2627** (13) **A**
A01B 15/00
 (21) **AM20110185** (22) **27.12.2011**
 (71) «Հայաստանի պետական ագրարային համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)
 (72) Արշալույս Պողոսի Թարվերդյան (AM), Արամ Արսենի Հովհաննիսյան (AM)
 (73) «Հայաստանի պետական ագրարային համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, 0009, Երևան, Տերյան 74 (AM)
(54) Կառավարվող իրաններով գույթան
 (57) Գյուտը վերաբերում է գյուղատնտեսական մեքենաշինությանը, մասնավորապես՝ հողի հիմնական մշակման մեքենաներին:

Սարքն ունի իրաններ, շրջանակ, շրջանակի վրա ուղղաձիգ հողակապի միջոցով տեղակայված կանգնակ՝ թևով ու խոփով, կարգավորվող ձգածող իր ականջիկով, կանգնակի վերին մասին իր մեջ ծայրամասով կոշտ միակցված լծակ, որի մյուս ծայրամասը հողակապորեն միակցված է կարգավորվող ձգածողի ականջիկի հետ: Կարգավորող ձգածողը նույն է յուրաքանչյուր գույգ իրանների համար, յուրաքանչյուր գույգի մեկ իրանն ունի շրջանակին՝ կանգնակին հակադիր, ամրակցված կալունակ, որի ծայրամասի անցքում տեղակայված է կալունակի երկու կողմից զսպանակած ձգածողի համապատասխան ծայրամասը, ընդ որում զսպանակները տեղակայված են մանեկի օգնությամբ կարգավորվելու հնարավորությամբ:

Նվազեցվում է գույթանի քարշային դիմադրությունը, ապահովվում է հողի մշակման բարձր որակը, ակտիվանում է խոփին փոխանցվող կտրող-փխրեցնող շարժումը, 2 նկ:

- (51) **(2012.01)** (11) **2628** (13) **A**
A01G 15/00
E01H 13/00
 (21) **AM20120016** (22) **24.01.2012**
 (71) «Բարվա» ՍՊԸ (AM)
 (72) Արամ Համբարձումի Վարդանյան (AM)
 (73) «Բարվա» ՍՊԸ, 0501, Արագածոտնի մարզ, Թալին, Մյասնիկյան 20 (AM)

(54) Մթնոլորտի վրա ակտիվ ներգործության եղանակ

(57) Գյուտը վերաբերում է մթնոլորտի վրա ակտիվ ներգործությանը, մասնավորապես, անձրևային տեղումների արհեստական խթանմանը, ամպամածության և մշուշի ցրմանը, բարենպաստ եղանակային պայմանների ստեղծմանը:

Մթնոլորտի վրա ակտիվ ներգործության եղանակում պսակապարպվող հաղորդալարային համակարգի միջոցով գեներացնում են էլեկտրականապես լիցքավորված մասնիկների հոսքը և մասնիկներն ստիպողական մղում են վերընթաց դեպի անհրաժեշտ բարձրություններ: Լիցքավորված մասնիկների վերընթաց մղումն իրականացնում են պսակապարպվող հաղորդալարային համակարգից առավելագույնս 10մ հեռավորության վրա տեղակայված առնվազն մեկ ակուստիկական գեներատորի միջոցով: Գյուտի նախընտրելի տարբերակով ակուստիկական գեներատորը տեղակայում են անմիջականորեն պսակապարպվող հաղորդալարային համակարգի տակ:

Բարձրացվում է եղանակի արդյունավետությունը, նվազեցվում է ծախսատարությունը, 1 նկ.:

- (51) **(2012.01)** (11) **2629** (13) **A**
A23L 1/00
 (21) **AM20100142** (22) **27.10.2010**
 (71) Ժիրայր Աղաջանյան (AM), Աղավնի Ֆահրատյան (AM)
 (72) Ժիրայր Աղաջանյան (AM), Աղավնի Ֆահրատյան (AM)
 (73) Ժիրայր Աղաջանյան, 0028, Երևան, Ն. Դումանի 54, բն. 5 (AM), Աղավնի Ֆահրատյան, 0099, Երևան, Շինարարների 27, բն. 58 (AM)
(54) Դդումի խավիար
 (57) Գյուտը վերաբերում է սննդի արդյունաբերությանը, մասնավորապես՝ բանջարեղենների խորտիկային պահածոների արտադրմանը:

Դդումի խավիարը ներառում է տապակած դդում, սոխ, զազար, թարմ կանաչի, շաքար, կերակրի աղ, 24%-անոց տոմատի մածուկ, սև պղպեղ, հոտավետ պղպեղ: Խավիարի բաղադրամասերը վերցրած են հետևյալ հարաբերակցությամբ, զանգվ. %. տապակած դդում՝

70.0 – 75.0, տապակած սոխ՝ 3.20, տապակած գազար՝ 5.90, թարմ կանաչի՝ 0.95, շաքար՝ 0.75, կերակրի աղ՝ 1.50, 24%-անոց տոմատի մածուկ՝ 12.6 – 17.6, սև պղպեղ՝ 0.05, հոտավետ պղպեղ՝ 0.05:

Բարձրացվում են դրմի խավիարի զգայորոշման հատկությունները:

(51) **(2012.01)** (11) **2630** (13) **A**
A43B 9/00
A43B 13/00

(21) **AM20110047** (22) **19.04.2011**
 (31) 12/764976 (32) 22.04.2010 (33) US
 (71) Մինգ-Տե Չեն (TW)
 (72) Չուանգ-Չուան Չեն (TW)
 (73) Մինգ-Տե Չեն (TW)

(54) **Կոշիկ**
 (57) Կոշիկը ներառում է կողմնային և հատակային մասեր ունեցող կոշկերես, ներբան և կապող միջին տարր, որն ունի կոշկերեսի կողմնային մասի արտաքին կողմին կարված առաջին հատվածամաս, առաջին հատվածամասի արտաքին կողմի ստորին մասին ուղղահայաց և դրանից դուրս գտնվող երկրորդ հատվածամաս, առաջին հատվածամասի ներքին կողմի ստորին մասից դեպի ներս տարածվող հորիզոնական երրորդ հատվածամաս: Կապող միջին տարրն ունի երկրորդ հատվածամասին հարող և կոշկերեսի հատակային մասին ուղղահայաց առանցք ունեցող անցքեր: Կապող միջին տարրը և կոշկերեսի հատակային մասը ներառող ներբանը կազմավորված է անցքերի մեջ և երրորդ հատվածամասի ու կոշկերեսի հատակային մասի ստորին մասի միջև առկա միջակայքի մեջ լցված նյութով: Գերադասորեն երրորդ հատվածամասը կազմավորված է առանձին ատամնավոր տարրերով, որոնք հիմքերով ամրակցված են երկրորդ հատվածամասին, իսկ երկրորդ հատվածամասն իր ներքին կողմի ստորին մասում ունի փորակներ, որոնք հաղորդակցվում են համապատասխան անցքերի հետ: Գերադասորեն փորակների առանցքներն ուղղահայաց են անցքերի առանցքներին: Ապահովվում է կոշկերեսի ու ներբանի միջև հուսալի կապը, 6 նկ.:

(74) Հ. Դավթյան

(51) **(2012.01)** (11) **2631** (13) **A**
A61K 47/00

(21) **AM20110174** (22) **14.12.2011**
 (71) Հայկ Դավթի Ենոքյան (AM)
 (72) Հայկ Դավթի Ենոքյան (AM)

(73) Հայկ Դավթի Ենոքյան, 0078, Երևան, Գալշոյան 12, բն. 1ա (AM)

(54) **Քթի վիրահատության եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է բժշկությանը, մասնավորապես քթի վիրահատությանը:

Համաձայն քթի վիրահատության եղանակի՝ կատարում են քթի ոսկրա-աճառային հենքի մերկացում, թևակերպ աճառների միջնային և կողմնային ոտիկներն անջատում են հարակից հյուսվածքներից, այնուհետև միջնային և կողմնային ոտիկները ֆիքսում են նոր դիրքում կարերով: Միջնային ոտիկները վերադասավորում են կողք-կողքի՝ ճշտելով քթի ծայրի բարձրությունը և ժամանակավորապես ֆիքսում ասեղի միջոցով: Մասնատում են միջնային ոտիկների ազատ հատվածները, այնուհետև միջնային ոտիկները ամրացնում են միջնապատի աճառի ազատ եզրին Prolen 5.0 կարանյութով՝ ձևավորելով նոր գմբեթներ:

Բարձրացվում է վիրահատության արդյունավետությունը:

(51) **(2012.01)** (11) **2632** (13) **A**
A61K 47/00

(21) **AM20110170** (22) **02.12.2011**
 (71) Յուրի Միքայելի Պողոսյան (AM), Հայկ Դավթի Ենոքյան (AM)
 (72) Յուրի Միքայելի Պողոսյան (AM), Հայկ Դավթի Ենոքյան (AM)

(73) Յուրի Միքայելի Պողոսյան, 0817, Արարատի մարզ, գյուղ Նոր Խարբերդ 10, տուն 14 (AM), Հայկ Դավթի Ենոքյան, 0079, Երևան, Գալշոյան 12, բն. 1ա (AM)

(54) **Քթի վիրահատությունից հետո առաջացած կպումների բուժման եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է բժշկությանը, մասնավորապես՝ քթի վիրահատությունից հետո առաջացած կպումների բուժման եղանակներին:

Կպումները հատում են, վերքերի մակերևույթների միջև տեղադրում են մեկուսացնող միջոց՝ ռենտգենյան ժապավեն, որի չափերը

գերազանցում են վերքերի մակերևույթների չափերը 2 անգամ, իսկ ժապավենի դեպի վերքերը ուղղված մակերևույթը ծածկում 0,35–0,42մմ հաստության մեղրամոմե թաղանթով, որը հեռացնում են վիրահատությունից 12–15 օր հետո:

Բարձրացվում է բուժման արդյունավետությունը:

(51) **(2012.01)** (11) **2633** (13) **A**
B02C 23/00

(21) **AM20100149** (22) **12.11.2010**

(71) «Հայաստանի պետական ագրարային համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)

(72) Արամայիս Մյասնիկի Եսոյան (AM), Գեղամ Միշայի Միքայելյան (AM), Արամ Պարզևի Տոնապետյան (AM)

(73) «Հայաստանի պետական ագրարային համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, 0009, Երևան, Տերյան 74 (AM)

(54) **Կարտոֆիլահանի կոշտաջարդիչ**

(57) Գյուտը վերաբերում է գյուղատնտեսական մեքենաշինությանը, մասնավորապես՝ բերքահավաքի մեքենաներին:

Կարտոֆիլահանի կոշտաջարդիչը կազմված է տնուց, դրա վրա տեղադրված գլանվակից և սարքը կարտոֆիլահանի հետ միացման լծակներից: Գլանվակն իրականացված է տնու վրա հավաքված պալարամարգերի կոնտուրին համապատասխան տարբեր տրամագծերի սկավառակներից: Սկավառակների միջև տեղադրված են տափօղակներ, իսկ սկավառակների վրա տեղակայված են կոր մատներ: Պալարամարգի մեջ մատների խորացման չափը կարգավորելի է:

Ապահովվում է կարտոֆիլի պալարամարգերի կոշտերի ջարդում, անհրաժեշտ խորությամբ հողաշերտի մասնակի փխրեցում և լավանում է կարտոֆիլի սեպարացիան, 2նկ.:

(51) **(2012.01)** (11) **2634** (13) **A**
B23D 79/00

(21) **AM20120021** (22) **24.01.2012**

(71) «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)

(72) Բորիս Բալասանյան (AM), Ստեփան Խրիստաֆորյան (AM), Արամ Բալասանյան (AM), Կարինե Գուլոյան (AM), Ալեքսանդր Ղարայան (AM), Դավիթ Յուրմուզյան (AM)

(73) «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, 0009, Երևան, Տերյան 105 (AM)

(54) **Աստիճանավոր կտրող սայր**

(57) Գյուտը վերաբերում է մեքենաշինության բնագավառին, մասնավորապես, աստիճանավոր կտրող սայրով մետաղների կտրման գործընթացներին:

Աստիճանավոր կտրող սայրն ունի կտրող աստիճաններ, որոնց գագաթները կտրման խորության ուղղությամբ իրարից գտնվում են 0,3-0,4 մմ հեռավորության վրա, մատուցման ուղղությամբ՝ 0,6-0,8 մմ հեռավորության վրա: Համաձայն գյուտի, սայրը բաժանված է առանձին կտրող մասերի, յուրաքանչյուր մասը պարունակում է երեքական կտրող աստիճան, իսկ դրանց միջև հեռավորությունը մատուցման ուղղությամբ հավասար է (4-6)xa մմ, որտեղ՝ a-ն - կտրման խորության ուղղությամբ կտրող աստիճանների գագաթների միջև հեռավորությունն է:

Բարձրանում է հեռացվող տաշեղի հատույթի սահմանային չափերը, 1 նկ:

(51) **(2012.01)** (11) **2635** (13) **A**
C01G 39/00

(21) **AM20110161** (22) **11.11.2011**

(71) Ֆերդինանդ Վաղարշակի Միրզոյան (AM)

(72) Ֆերդինանդ Վաղարշակի Միրզոյան (AM), Նատելլա Օհանյան (AM)

(73) Ֆերդինանդ Վաղարշակի Միրզոյան, 0096, Երևան, Դ. Մալյան 20, բն.72 (AM)

(54) **Հեքսավոլֆրամապլումինային հետերոբազմաթթվի ստացման եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է անօրգանական քիմիային, մասնավորապես՝ հեքսավոլֆրամապլումինային հետերոբազմաթթվի (6-ՄԱԹ) ստացմանը և կարող է կիրառվել վերլուծական քիմիայում, կենսաքիմիայում, բժշկության մեջ և այլ բնագավառներում:

Նատրիումի վոլֆրամատը և ալյումինի սուլֆատը ենթարկում են փոխազդեցության թթվային միջավայրում նոսր ջրային լուծույթներում՝ նատրիումի վոլֆրամատի $6 \cdot 10^{-5}$ - $6 \cdot 10^{-2}$ մոլ/լ և ալյումինի սուլֆատի $5 \cdot 10^{-6}$ - $5 \cdot 10^{-3}$ մոլ/լ կոնցենտրացիաների և լուծույթի pH-ի 3,0 - 3,8 արժեքներում:

Գյուտը ապահովում է ջրային նոսր լուծույթներում կայուն հեքսավոլֆրամաալյումինային հետերոբազմաթթվի ստացումը:

(51) (2012.01) (11) 2636 (13) A
C07K 7/00

(21) AM20100158 (22) 23.11.2010
(71) Արմեն Գալոյան (AM), Սուրեն Գրիգորյան (AM), Մարիամ Սարգսյան (AM)
(72) Արմեն Գալոյան (AM), Սուրեն Գրիգորյան (AM), Մարիամ Սարգսյան (AM)
(73) Արմեն Գալոյան, 0010, Երևան, Եզնիկ Կողբացու 2ա, բն. 66 (AM), Սուրեն Գրիգորյան, 0088, Երևան, Մազմանյան 5, բն. 59 (AM), Մարիամ Սարգսյան, 0041, Երևան, Նոր-Արեշի 4-րդ փող.12/2 (AM)

(54) **Հիպոթալամուսի պրոլինոլ հարուստ պոլիպեպտիդ «Գալարմին»-ի կիրառումը որպես Clostridium perfringens ինֆեկցիոն էնտերոտոքսեմիայի հարուցիչով պայմանավորված գազային գանգրենայի բուժման և կանխարգելման միջոց**

(57) Գյուտը վերաբերում է պեպտիդներին, մասնավորապես՝ կենդանիների հիպոթալամուսի և նեյրոհիպոֆիզի նեյրոսեկրետոր գրանուլաներից անջատված Ala-Gly-Ala-Pro-Glu-Pro-Ala-Glu-Pro-Ala-Gln-Pro-Gly-Val-Tyr ամինաթթվային հաջորդականությամբ պրոլինոլ հարուստ պոլիպեպտիդ «Գալարմին»-ին:

«Գալարմին»-ը կարող է կիրառվել որպես Clostridium perfringens ինֆեկցիոն էնտերոտոքսեմիայի հարուցիչով պայմանավորված գազային գանգրենայի բուժման և կանխարգելման միջոց:

Ընդլայնվում է գազային գանգրենայի բուժման միջոցների տեսականին:

(51) (2012.01) (11) 2637 (13) A
C07K 7/00

(21) AM20100157 (22) 23.11.2010
(71) Արմեն Գալոյան (AM), Սուրեն Գրիգորյան (AM), Մարիամ Սարգսյան (AM)
(72) Արմեն Գալոյան (AM), Սուրեն Գրիգորյան (AM), Մարիամ Սարգսյան (AM)
(73) Արմեն Գալոյան, 0010, Երևան, Եզնիկ Կողբացու 2ա, բն. 66 (AM), Սուրեն Գրիգորյան, 0088, Երևան, Մազմանյան 5, բն. 59 (AM), Մարիամ Սարգսյան, 0041, Երևան, Նոր-Արեշի 4-րդ փող. 12/2 (AM)

(54) **Հիպոթալամուսի պրոլինոլ հարուստ պոլիպեպտիդ «Գալարմին»-ի կիրառումը որպես հակասիբիրախտային գերիմուն շիճուկի ստացման իմունախթանիչ**

(57) Գյուտը վերաբերում է պեպտիդներին, մասնավորապես՝ կենդանիների հիպոթալամուսի և նեյրոհիպոֆիզի նեյրոսեկրետոր գրանուլաներից անջատված Ala-Gly-Ala-Pro-Glu-Pro-Ala-Glu-Pro-Ala-Gln-Pro-Gly-Val-Tyr ամինաթթվային հաջորդականությամբ պրոլինոլ հարուստ պոլիպեպտիդ «Գալարմին»-ին:

«Գալարմին»-ը կարող է կիրառվել որպես իմունախթանիչ միջոց հակասիբիրախտային գերիմուն շիճուկի ստացման համար:

Ընդլայնվում է հակասիբիրախտային գերիմուն շիճուկների ստացման համար միջոցների տեսականին:

(51) (2012.01) (11) 2638 (13) A
C07K 7/00

(21) AM20100143 (22) 29.10.2010
(71) Արմեն Գալոյան (AM), Անդրանիկ Դուրգարյան (AM), Օլգա Դմիտրենկո (RU)
(72) Արմեն Գալոյան (AM), Անդրանիկ Դուրգարյան (AM), Օլգա Դմիտրենկո (RU)
(73) Արմեն Գալոյան, 0010, Երևան, Եզնիկ Կողբացու 2ա, բն. 66 (AM), Անդրանիկ Դուրգարյան, 0014, Երևան, Կ. Ուլնեցու 49, բն. 20 (AM), Օլգա Դմիտրենկո, 123592, Մոսկվա, Նեմանսկի նրբ. 7, բն. 359 (RU)

(54) **Հիպոթալամուսի պրոլինոլ հարուստ պոլիպեպտիդ «Գալարմին»-ի կիրառումը որպես իմունախթանիչ միջոց մետիցիլինկայուն Staphylococcus aureus (MRSA) բակտերիայով**

(57) Գյուտը վերաբերում է պեպտիդներին, մասնավորապես՝ հիպոթալամուսի և նեյրոհիպոֆիզի գրանուլաներից անջատված AGAPEPAEPAQPGVY ամինաթթվային հաջորդականությամբ պրոլինոլ հարուստ պոլիպեպտիդ՝ «Գալարմին»-ին:

«Գալարմին»-ը կարող է կիրառվել որպես իմունախթանիչ միջոց մետիցիլին-կայուն Staphylococcus aureus (MRSA) բակտերիայով պայմանավորված ինֆեկցիայի դեպքում:

Ընդլայնվում է բակտերիալ և վիրուսային հիվանդությունների բուժման միջոցների տեսականին:

(51) (2012.01) (11) 2639 (13) A
E05B 25/00

(21) AM20100151 (22) 19.11.2010

(71) Ալբերտ Սրապիոնի Պողոսյան (AM)

(72) Ալբերտ Սրապիոնի Պողոսյան (AM)

(73) Ալբերտ Սրապիոնի Պողոսյան, 0088, Երևան, Շիրազի 20, բն. 30 (AM)

(54) **Փականքի գլանային մեխանիզմ**

(57) Գյուտը վերաբերում է փականքներին:

Փականքի գլանային մեխանիզմը ունի իրան, նրա անցքի մակերևույթի վրա արված օղակաձև հանվածք, իրանում պտտվելու հնարավորությամբ տեղակայված երկայնական առվակներով միջուկ, դրա մեջ դասավորված փակիչ սկավառակներ և անշարժ տափօղակներ, միջուկը սևեռող բույթ: Համաձայն առաջարկության, իրանի անցքի օղակաձև հանվածքի մակերևույթի վրա արված է ելուստ, որի կենտրոնական մասում, երկայնական ուղղությամբ արված է թեք պատերով ակոսիկ, որում միջուկը անշարժ սևեռելու հնարավորությամբ տեղակայված է սևեռող բույթը, իսկ փակող սկավառակների անցքի մակերևույթի վրա արված է ելուստ 90°անկյունով: Ելուստները բանալին պտտելիս փոխներգործում են բանալու հարթ մասի վրա երկու կողմից արված տարբեր անկյուն ունեցող հանվածքների հետ, որոնց անկյունների գումարը ցանկացած լայնական կտրվածքում հավասար է 0°-ից 90°:

Ապահովվում է փականքի շահագործումը երկու ուղղությամբ, 6 նկ.:

(51) (2012.01) (11) 2640 (13) A
F16L 55/00

(21) AM20100155 (22) 19.11.2010

(71) Գուրգեն Ռուբենի Ավետիսյան (AM)

(72) Գուրգեն Ռուբենի Ավետիսյան (AM)

(73) Գուրգեն Ռուբենի Ավետիսյան, 3115, Գյումրի, Տիմիրյազևի 32 (AM)

(54) **Խողովակաշար համակարգերում ճնշման տատանումների կանգուն ալիքների մարման եղանակ և դրա իրականացման սարք**

(57) Գյուտը վերաբերում է խողովակաշար համակարգերում հեղուկի և գազի ճնշման տատանումների կառավարման բնագավառին:

Եղանակի համաձայն խողովակաշարի ներսում միջավայրի հոսքի ալիքային խանգարման կետերին կից հատվածում՝ տեղակայում են ալիքների մարման սարք: Նախքան ալիքների մարման սարքի տեղակայելը որոշում են խողովակաշարի ճնշման տատանումների կանգուն ալիքների փնջվածքների տեղերը, որից հետո ալիքների մարման սարքը տեղակայում են կանգուն ալիքների փնջվածքի առավելագույն արժեք ունեցող տեղերում: Խողովակաշար համակարգերում ճնշման տատանումների կանգուն ալիքների մարման սարքն ունի գլանաձև իրան, իրանին համառանցք տեղակայված ծակոտած հոսանուտ խողովակ, նախախուց, երկու կողային խցեր, որոնք իրար հետ հաղորդակցվում են նախախցի և առածգական էլիպսաձև մարիչ խողովակների միջոցով, որոնք տեղակայված են կողային խուցերի միջև իրանին զուգահեռ: Յուրաքանչյուր առածգական էլիպսաձև մարիչ խողովակի երկարությունը որոշում են համապատասխան մաթեմատիկական բանաձևով:

Բարձրացվում են կանգուն ալիքների մարման ինտենսիվությունը և արդյունավետությունը, 2 նկ.:

(51) (2012.01) (11) 2641 (13) A
H02M 3/00

(21) AM20110130 (22) 22.09.2011

(71) Նորիկ Նահապետի Պետրոսյան (AM), Պարզև Սուրենի Մանուկյան (AM)

(72) Նորիկ Նահապետի Պետրոսյան (AM), Պարզև Սուրենի Մանուկյան (AM)

(73) Նորիկ Նահապետի Պետրոսյան, 0018, Երևան, Նար-Դոսի 11 (AM), Պարզև Սուրենի Մանուկյան, 0070, Երևան, Վարդանանց 22, բն. 35 (AM)

(54) Հակադարձ դիողներով ռեզոնանսային ինվերտոր

(57) Գյուտը վերաբերում է էլեկտրատեխնիկային, մասնավորապես՝ ռեզոնանսային ինվերտորներով կերպափոխիչներին և կարող է օգտագործվել էլեկտրատեխնոլոգիայում, օրինակ՝ ինդուկցիոն տաքացման տեղակայանքներում:

Հակադարձ դիողներով ռեզոնանսային ինվերտորը կառուցված է կամրջակային սխե-

մայով, որի մուտքին միացված է հաստատուն լարման աղբյուրի հետ կապված հարթեցնող զտիչ: Կամրջակի անկյունագծում միացված է բեռ, իսկ կամրջակի հակադիր երկու թևերի խաչաձև մասերում հանդիպական զուգահեռ միացումով միացված են տրանզիստոր (տիրիստոր) և հակադարձ դիող: Կամրջակի հակադիր թևերի մյուս խաչաձև մասերում տեղադրված են միանման ռեզոնանսային LC կոնտուրներ:

Նվազեցվում է ուժային վենտիլների քանակը, բարձրացվում է օ.գ.գ.-ն, 5 նկ.:

**ՕԳՏԱԿԱՐ
ՄՈԴԵԼՆԵՐ**

Օգտակար մոդելներին վերաբերող մատենագիտական տվյալների նույնականացման միջազգային կոդերը ըստ ՄՍՀԿ ST.9 ստանդարտի

11	արտոնագրի համարը
13	փաստաթղթի տեսակի կոդը U օգտակար մոդելի արտոնագիր
21	հայտի համարը
22	հայտի ներկայացման թվականը
23	ցուցահանդեսային առաջնության թվականը
31	առաջին հայտի համարը
32	առաջին հայտի ներկայացման թվականը
33	երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջին հայտը
45	օգտակար մոդելի արտոնագիր տալու մասին տեղեկությունների հրապարակման թվականը
51	միջազգային արտոնագրային դասակարգման (ՄԱԴ) ցուցիչը(ները)
54	օգտակար մոդելի անվանումը
56	տեղեկատվության աղբյուրներ
57	օգտակար մոդելի ռեֆերատը կամ հավակնության սահմանումը
62	ավելի վաղ ներկայացված հայտի համարը և ներկայացման թվականը, որից զատված է տվյալ հայտը
71	հայտատուն, երկրի կոդը
72	օգտակար մոդելի հեղինակը (ները), երկրի կոդը
73	արտոնագրատերը, հասցեն, երկրի կոդը
74	արտոնագրային հավատարմատար
85	միջազգային հայտի (PCT) ազգային փուլ փոխադրման թվականը
86	միջազգային հայտի (PCT) համարը և ներկայացման թվականը
87	միջազգային հայտի (PCT) հրապարակման համարը և թվականը

Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին

(51) (2012.01) (11) 288 (13) U
G01J 1/00

(21) AM20110184U (22) 22.12.2011

(71) Սերգեյ Գավրիլի Խալպախյան (AM)
(72) Սերգեյ Գավրիլի Խալպախյան (AM),
Ջուլետտա Գերասիմի Վարդանյան (AM),
Մանուկ Նեստերի Ներսիսյան (AM)
(73) Սերգեյ Գավրիլի Խալպախյան, 0069,
Երևան, Ռուբինյանց 1ա, բն. 73 (AM)

(54) **Ուլտրամանուշակագույն ճառագայթման ընդունիչ**

(57) Օգտակար մոդելը վերաբերում է վակուումային ուլտրամանուշակագույն ճառագայթումների ընդունման և գրանցման սարքերին և կարող է օգտագործվել տիեզերական օբյեկտների, սինքրոտրոնային ճառագայթների ուսումնասիրության համար, ինչպես նաև բժշկության, գյուղատնտեսության մեջ, ֆիզիկական հետազոտություններում:

Ընդունիչն ունի հաջորդաբար տեղակայված կիզակետող և զտող հանգույցներ, կոնվերտեր և օպտոէլեկտրոնային կերպափոխիչ, որին միացված է էլեկտրական ազդանշանի մշակման և ցուցանշման սարք: Կոնվերտերը որպես խառնուկներ քրոմ (Cr), մանգան (Mn), ցինկ (Zn), տիտան (Ti), երկաթ (Fe) և/կամ պղինձ (Cu) ներառող կորունդի միաբյուրեղ է: Կորունդի միաբյուրեղը լրացուցիչ որպես խառնուկ ներառում է կոբալտ (Co) կամ կոբալտի (Co), քրոմի (Cr), մանգանի (Mn), ցինկի (Zn), տիտանի (Ti), երկաթի (Fe), պղինձի (Cu) համակցությունը:

Բարձրացվում է և լայնացվում է ընդունիչի սպեկտրային զգայնությունը, 3 նկ.:

(73) Արմեն Պետրոսի Շատախյան, 0070, Երևան, Երվանդ Քոչար 21/1, բն. 60 (AM)

(54) **Գազամուղի մաքրող մխոցի արձակման հանգույց**

(57) Օգտակար մոդելը վերաբերում է չափիչ տեխնիկային, մասնավորապես գազամուղի մաքրման համալիրում մաքրող մխոցի արձակման հանգույցի չափման, ցուցանշման և կառավարման էլեկտրոնային համակարգերին:

Գազամուղի մաքրող մխոցի արձակման հանգույցը կազմված է մուտքային և ելքային փականներից, որոնք տեղակայված են գազամուղի համապատասխանաբար մուտքային և ելքային ճյուղերի վրա, մխոցի արձակման խցիկից, որը միակցված է ելքային փականին և փականավոր խողովակաշարի միջոցով միակցված է գազամուղի մուտքային ճյուղին, ինչպես նաև ունի խցիկի մուտքային և ելքային մասերի հետ կապված ճնշման անկման ցուցիչ, շունտավորող փականավոր խողովակաշարերից, մխոցի անցման ազդանշանիչներից, որոնք տեղակայված են գազամուղի ելքային ճյուղի վրա ելքային փականի երկու կողմից և կառավարման ավտոմատ համակարգից: Հանգույցի բոլոր փականները էլեկտրապնմափականներ են: Կառավարման ավտոմատ համակարգը կազմված է միկրոկոնտրոլերից և կարգավարական կենտրոնի հետ կապի էլեկտրոնային ընդունահաղորդիչ բլոկից: Միկրոկոնտրոլերի համապատասխան պորտերը միացած են յուրաքանչյուր փականին, մխոցի անցման յուրաքանչյուր ազդանշանիչին, ճնշման անկման ցուցիչին և կապի էլեկտրոնային ընդունահաղորդիչ բլոկին:

Բարձրացվում է հուսալիությունը, իջեցվում է արժեքը, ընդլայնվում են ֆունկցիոնալ հնարավորությունները, 2 նկ.:

(51) (2012.01) (11) 289 (13) U

G05D 29/00

G01L 13/00

B08B 9/00

(21) AM20120029U (22) 13.02.2012

(71) Արմեն Պետրոսի Շատախյան (AM)
(72) Արմեն Պետրոսի Շատախյան (AM), Սարգիս Հովհաննեսի Սիմոնյան (AM), Պետրոս Մեսրոպի Շատախյան (AM)

(51) (2012.01) (11) 290 (13) U

G05D 29/00

G01L 13/00

B08B 9/00

(21) AM20120028U (22) 13.02.2012

(71) Արմեն Պետրոսի Շատախյան (AM)

(72) Արմեն Պետրոսի Շատախյան (AM), Սարգիս Հովհաննեսի Սիմոնյան (AM), Պետրոս Մեսրոպի Շատախյան (AM)

(73) Արմեն Պետրոսի Շատախյան, 0070, Երևան, Երվանդ Քոչար 21/1, բն. 60 (AM)

(54) **Գազամուղի մաքրող մխոցի ընդունման հանգույց**

(57) Օգտակար մոդելը վերաբերում է չափիչ տեխնիկային, մասնավորապես գազամուղի մաքրման համալիրում մաքրող մխոցի ընդունման հանգույցի չափման, ցուցանշման և կառավարման էլեկտրոնային համակարգերին:

Հանգույցն ունի մուտքային փական, որը տեղակայված է գազամուղի մուտքային ճյուղի վրա, շունտավորված է փականավոր խողովակաշարով և ունի փականի մուտքի և ելքի հետ կապված ճնշման անկման ցուցիչ, գազամուղի ելքային ճյուղի վրա տեղակայված ելքային փականից, մխոցի ընդունման խցիկից, որը միակցված է մուտքային փականին և գազամուղի ելքային ճյուղին, խտուցքահավաք լցարանից, որը փականավոր խողովակաշարերի միջոցով կապված է գազամուղի և ընդունման խցիկի հետ, մխոցի անցման ազդանշանիչներից, որոնք տեղակայված են գազամուղի մուտքային ճյուղի վրա մուտքային փականի երկու կողմից և կառավարման ավտոմատ համակարգից: Հանգույցի բոլոր փականները էլեկտրապնմամափականներ են: Կառավարման ավտոմատ համակարգը կազմված է միկրոկոնտրոլերից և կարգավարական կենտրոնի հետ կապի էլեկտրոնային ընդունահաղորդիչ բլոկից: Միկրոկոնտրոլերի համապատասխան պորտերը միացված են յուրաքանչյուր փականին, մխոցի անցման յուրաքանչյուր ազդանշանիչին, ճնշման անկման ցուցիչին և կապի էլեկտրոնային ընդունահաղորդիչ բլոկին:

Բարձրացվում է հուսալիությունը, իջեցվում է արժեքը, ընդլայնվում են ֆունկցիոնալ հնարավորությունները, 2 նկ.:

(51) (2012.01) (11) 291 (13) U
G09B 9/00

(21) AM20110149U (22) 28.10.2011

(71) «ՌԱԴՎԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ» ՍՊԸ (AM)

(72) Արայիկ Հրաչիկի Ազիզյան (AM)

(73) «ՌԱԴՎԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ» ՍՊԸ, 0018, Երևան, Սիլիկյան թաղ., 5-րդ փող., 58 (AM)

(54) **Տանկի համալիր վարժասարք**

(57) Օգտակար մոդելը վերաբերում է ռազմական բնագավառին և կարող է կիրառվել զրահատանկային մեքենաների անձնակազմի՝ հրամանատարի, նշանառու օպերատորի և մեխանիկ վարորդի մեքենավարման և հրաձգության ուսուցման համար:

Վարժասարքն իրենից ներկայացնում է ապարատա-ծրագրային համալիր, որը բաղկացած է լոկալ համակարգչային ցանցով միմյանց միացված հրահանգչի, մարտական և կառավարման մոդուլներից: Հրահանգչի մոդուլի սարքավորումները միացված են մյուս մոդուլներին և թույլ են տալիս հետևելու և ձայնային կապի միջոցով ուղղորդելու ուսուցանվող անձնակազմի գործողությունները: Մարտական մոդուլը նախատեսված է T-72 տանկի հրամանատարի և նշանառու օպերատորի ուսուցման համար: Կառավարման մոդուլը նախատեսված է T-72 տանկի մեխանիկ-վարորդների ուսուցման համար, իրենից ներկայացնում է ուղղանկյուն դինամիկ տախտակամածի վրա տեղակայված խցիկ, որի ներքին չափերն ու կահավորանքը ամբողջությամբ իմիտացնում են իրական T-72 տանկի մեխանիկ վարորդի բաժանմունքը: Դինամիկ տախտակամածն ապահովում է տեղաշարժման պարամետրերը: Ծրագրային ապահովումը կառուցված է Windows XP օպերացիոն համակարգի և Quest3D ծրագրային փաթեթի հիման վրա:

Բարձրացվում է ուսուցման արդյունավետությունը, կրճատվում են ուսուցման ժամկետը և տնտեսական ծախսերը, 2 նկ.:

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ

ТОВАРНЫЕ ЗНАКИ

**Ապրանքային և սպասարկման նշանների վերաբերող
մատենագիտական տվյալների նույնականացման
միջազգային կոդերը ըստ ՄՍՀԿ ST.60 ստանդարտի**

111	գրանցման հերթական համարը
151	գրանցման թվականը (հանրահայտ ճանաչման թվականը)
152	թվականը, որից սկսած նշանը հանրահայտ է
181	գրանցման գործողության ենթադրյալ ավարտը
210	հայտի համարը
220	հայտի ներկայացման թվականը
230	ցուցահանդեսային կամ այլ առաջնության թվականը
310	առաջին հայտի համարը
320	կոնվենցիայով առաջնության թվականը
330	երկրի կողը, որտեղ ներկայացվել է առաջին հայտը
442	հայտի հրապարակման թվականը
511	ապրանքների և (կամ) ծառայությունների ցանկը
526	չպահպանվող տարրեր
540	ապրանքային նշանը
551	կոլեկտիվ կամ հավաստագրային նշան
554	ծավալային նշան
555	հոլոգրաֆիական նշան
556	ձայնային նշան
591	գույնը և գունային համակցությունը
646	իրավաբանորեն փոխկապակցված այլ գրանցման համարը և թվականը
730	նշանի իրավատերը, հասցեն, երկրի կողը
740	արտոնագրային հավատարմատար

Տեղեկություններ գրանցված ապրանքային և սպասարկման նշանների մասին

(210) **20110309** (111) **18271**
(220) **10.03.2011** (151) **11.04.2012**
(181) **10.03.2021**

(730) Յունիլեր Ն.Վ., NL
(442) 21.04.2011
(540)



(511)

դաս 3. օճառ. պատրաստուկներ մաքրման համար. օճանելիք, անուշաբույր ջուր, լոսյոններ սափրվելուց հետո օգտագործելու համար, օդեկոլոն. եթերային յուղեր. հոտազերծիչներ և հակաքրտինքային միջոցներ. պատրաստուկներ գլխի մաշկի և մազերի խնամքի համար. շամպուններ և լավորակիչներ. մազերի ներկման միջոցներ. մազերի հարդարման միջոցներ. ատամի մածուկ. բերանի խոռոչի լվացման միջոցներ ոչ բուժական նպատակների համար. պատրաստուկներ բերանի խոռոչի և ատամների խնամքի համար. դեղերով չտոգորված արդուզարդի պատրաստուկներ. պատրաստուկներ լոզանքի և ցնցուղի համար. պատրաստուկներ մաշկի խնամքի համար. յուղեր, քսուքներ և լոսյոններ մաշկի համար. պատրաստուկներ սափրման համար. պատրաստուկներ սափրվելուց առաջ և հետո օգտագործելու համար. պատրաստուկներ մազաձածկույթի հեռացման համար. պատրաստուկներ արևայրուքի և արևից պաշտպանվելու համար. կոսմետիկական միջոցներ. պատրաստուկներ շաքարվելու և շաքարը հեռացնելու համար. կոսմետիկական վազելին. պատրաստուկներ շրթունքների խնամքի համար. տալկի փոշի. բամբակ կոսմետիկական նպատակների համար, բամբակյա ծայրով փայտիկներ. կոսմետիկական բարձիկներ, անձեռոցիկներ կամ թաշկինակներ. նախօրոք խոնավացված մաքրող բարձիկներ, անձեռոցիկներ կամ թաշկինակներ. կոսմետիկական դիմակներ, դեմքի խնամքի միջոցների հավաքածուներ:

դաս 21. պիտոյատուփեր արդուզարդի պարագաների համար. փոքր չափերի տնային կահկարասի և տարաներ. պարկեր լվացքի համար. խոզանակներ. սանրեր. սպունգներ. շաքարափնջիկներ դիմափոշու համար. դիմափոշու տուփեր. տնային իրեր արդուզարդի, զուգարանի համար. ատամի խոզանակներ. ատամների մաքրման համար նախատեսված թելեր և ժապավեններ. ատամնափորիչներ. լաթեր մաքրման համար. լաթեր փոշին սրբելու ու փայլեցնելու համար. բարձիկներ մաքրման համար. զուգարանի (արդուզարդի) պարագաների մատուցման (բաշխման) սարքեր և տարողություններ:

(740) Ալ. Նահապետյան

(210) **20111273** (111) **18272**
(220) **12.10.2011** (151) **11.04.2012**
(181) **12.10.2021**

(730) «Արարատ» սննդի կոմբինատ ՍՊԸ, ք. Երևան, Արաբկիրի 29, տ. 13/1, AM

(442) 05.11.2011

(540)



(511)

դաս 29. պահածոյացված, սառեցված, չորացված և ջերմամշակման ենթարկված մրգեր և բանջարեղեն. դոնդող, մուրաբա, կոմպոտ:


(740) Զ. Մանուկյան

(210) **20111280** (111) **18273**
(220) **13.10.2011** (151) **11.04.2012**
(181) **13.10.2021**

(730) Մհեր Վանիկի Բաղդասարյան, Երևան, Ռուստամյան 66, AM

(442) 05.11.2011

(540)



(511)
 դաս 35. բջջային հեռախոսների և արքեստուարների վաճառք.
 դաս 37. բջջային հեռախոսների տեխնիկական սպասարկում.
 դաս 42. բջջային հեռախոսների ծրագրային սպասարկում:

(210) **20111282** (111) **18274**
 (220) **14.10.2011** (151) **11.04.2012**
 (181) **14.10.2021**
 (730) ՍիՍիԷմ ԱյՓի ՍԱ, ՇԻ
 (442) 21.11.2011
 (540)



(511)
 դաս 32. գարեջուր:
 (740) Վ. Պետրոսյան

(210) **20111296** (111) **18275**
 (220) **18.10.2011** (151) **11.04.2012**
 (181) **18.10.2021**
 (730) «Սիս ալկո» ՍՊԸ, Արարատի մարզ, գյուղ Հայանիստ, ԱՄ
 (442) 07.12.2011
 (540)



(526) Բացի «ՊԵՏՐՈՎԿԱ», «ՊԵՏՐՈՎԿԱ» (ռուս.) բառերից և «SIS ALCO» անվանումից մնացած բոլոր գրառումներն ինքնուրույն պահպանության օբյեկտներ չեն:
 (591) Նշանը պահպանվում է սև, կարմիր, սպիտակ և ոսկեգույն գունային համակցությամբ:
 (511)
 դաս 33. օղի:

(210) **20111381** (111) **18276**
 (220) **09.11.2011** (151) **11.04.2012**
 (181) **09.11.2021**

(730) Սարգիս Թարվերոյան, Երևան, Վ. Դավթյան փ., տուն 13, ԱՄ
 (442) 07.12.2011
 (540)

Fruiticella

(511)
 դաս 32. գազավորված ջրեր և այլ ոչ ալկոհոլային ըմպելիքներ. մրգային ըմպելիքներ և մրգա-հյութեր. օշարակներ և ըմպելիքների պատրաստման այլ բաղադրանյութեր:
 (740) Զ. Մանուկյան

(210) **20111430** (111) **18277**
 (220) **10.11.2011** (151) **11.04.2012**
 (181) **10.11.2021**

(730) «Ինվեսթմենթ լո գրուպ» ՍՊԸ, Երևան, Եկմալյան 6, ԱՄ
 (442) 07.12.2011
 (540)



(526) «INVESTMENT LAW GROUP» արտահայտությունն ինքնուրույն պահպանության օբյեկտ չէ:

(591) Նշանը պահպանվում է կարմիր գույնով:
(511)

դաս 45. իրավաբանական ծառայություններ. անվտանգության ծառայություններ սեփականության և անհատի պաշտպանության համար. այլ անձանց կողմից մատուցվող անհատական և սոցիալական ծառայություններ անհատի կարիքները հոգալու համար:

(210) **20111431** (111) **18278**
(220) **10.11.2011** (151) **11.04.2012**
(181) **10.11.2021**

(730) «Սալյուտ ԿՕ» ՍՊԸ, Երևան, Սայաթ-Նովա 26, AM
(442) 07.12.2011
(540)



(591) Նշանը պահպանվում է սև և վարդագույն գունային համակցությամբ:

(511)
դաս 25. ներքնազգեստ և զուգագուլպա:

(210) **20111452** (111) **18279**
(220) **11.11.2011** (151) **11.04.2012**
(181) **11.11.2021**

(730) «Ավշարի գինու գործարան» ՍՊԸ, Արարատի մարզ, գյուղ Ավշար, AM
(442) 21.11.2011
(540)

ՎԱՐԴԱՍԱՏ
VARDASAT
ВАРДАСАТ

(511)
33. ալկոհոլային խմիչքներ՝ բրենդի, գինի, օղի:

(210) **20111453** (111) **18280**
(220) **11.11.2011** (151) **11.04.2012**
(181) **11.11.2021**

(730) «Ավշարի գինու գործարան» ՍՊԸ, Արարատի մարզ, գյուղ Ավշար, AM
(442) 21.11.2011
(540)

ՆԻԿԱ
NIKA
НИКА

(511)
33. ալկոհոլային խմիչքներ՝ բրենդի, գինի, օղի:

(210) **20111456** (111) **18281**
(220) **14.11.2011** (151) **11.04.2012**
(181) **14.11.2021**

(730) Անհատ ձեռնարկատեր Ասատրյան Ռոմիկ, Արմավիր, Բաղրամյան 192., բն. 6, AM
(442) 07.12.2011
(540)



(511)
դաս 35. առևտուր:

(210) **20111462** (111) **18282**
(220) **15.11.2011** (151) **11.04.2012**
(181) **15.11.2021**

(730) «Ռէպապ» ՍՊԸ, Երևան, Դավթաշեն 1-ին թաղ. 35, բն. 30, AM
(442) 07.12.2011
(540)

VIKADIT

(511) դաս 2. ներկեր և պատվածքներ շինանյութերի երեսամշակման և շինությունների ներքին և արտաքին վերջնամշակման և(կամ) հարդարման համար.
դաս 19. ոչ մետաղյա շինանյութեր, չոր շինարարական խառնուրդներ:
(740) Ն. Թումանյան

(210) **20111508** (111) **18283**
(220) **28.11.2011** (151) **11.04.2012**
(181) **28.11.2021**
(730) Շողակաթ Ալեքսանյան, Երևան, Լենին-գրադյան 31/1, բն. 51, AM
(442) 18.01.2012
(540)



(591) Նշանը պահպանվում է սև և դեղին գունային համակցությամբ:

(511) դաս 3. սպիտակեցնող պատրաստուկներ և այլ նյութեր լվացքի համար. պատրաստուկներ մաքրման, ողորկման (փայլեցման), ճարպագերծման և հղկամշակման համար. օճառներ. օճանելիք, եթերային յուղեր, կոսմետիկական միջոցներ, լոսյոններ մազերի համար. ատամի փոշիներ և մածուկներ.

դաս 30. սուրճ, թեյ, կակաո, շաքար, բրինձ, տապիոկա, սագո, սուրճի փոխարինիչներ. այլուր և հացահատիկային մթերքներ, հաց, հրուշակեղեն և քաղցրավենիք, պաղպաղակ. մեղր, մաթ. խմորիչներ, հացաթխման փոշիներ. աղ, մանանեխ. քացախ, սոուսներ (համեմունք). համեմունք. սառույց.

դաս 35. գովազդ. գործերի կառավարում գործարարության ասպարեզում. վարչարարական գործունեություն գործարարության ասպարեզում. գրասենյակային ծառայություններ.

դաս 43. սննդամթերքով և ըմպելիքներով ապահովման ծառայություններ. ժամանակավոր բնակատեղով ապահովում:
(740) Վ. Պետրոսյան

(210) **20111516** (111) **18284**
(220) **30.11.2011** (151) **11.04.2012**
(181) **30.11.2021**

(730) Փեյլես Շուարս Ուորլդվայդ, Ինք., US
(442) 18.01.2012

(540) **UNFORGETTABLE MOMENTS**

(511) դաս 3. սպիտակեցնող պատրաստուկներ և այլ նյութեր լվացքի համար. պատրաստուկներ մաքրման, ողորկման (փայլեցման), ճարպագերծման և հղկամշակման համար. օճառներ. օճանելիք, եթերային յուղեր, կոսմետիկական միջոցներ, լոսյոններ մազերի համար. ատամի փոշիներ և մածուկներ:
(740) Ս. Կնյազյան

(210) **20111524** (111) **18285**
(220) **02.12.2011** (151) **11.04.2012**
(181) **02.12.2021**

(730) «Վեդի-ալկո» ՓԲԸ, Արարատի մարզ, գ. Գինեվետ, 0627, AM

(442) 22.12.2011
(540)

ԱՐԱՐՈՒՄ

ARARUM

APAPYUM

(511) դաս 33. ալկոհոլային խմիչքներ:

(210) **20111630** (111) **18286**
(220) **20.12.2011** (151) **11.04.2012**
(181) **20.12.2021**

(730) «Մեծն կայգեր» ՍՊԸ, Երևան, Օհանովի 78, բն. 30, AM

(442) 18.01.2012
(540)



(511) դաս 35. առևտուր:

(210) **20111673** (111) **18287**
 (220) **27.12.2011** (151) **11.04.2012**
 (181) **27.12.2021**
 (730) «Անդակո» ՍՊԸ, Երևան, Իսակովի պող.,
 10/25, AM
 (442) 18.01.2012
 (540)



(526) «ՍՈՒՊԵՐՄԱՐԿԵՏ» բառն ինքնուրույն
 պահպանության օբյեկտ է:
 (591) Նշանը պահպանվում կարմիր, կապույտ և
 կանաչ գունային համակցությամբ:
 (511)
 դաս 35. առևտուր:

(210) **20111068** (111) **18288**
 (220) **26.08.2011** (151) **12.04.2012**
 (181) **26.08.2021**
 (730) Մերի Քեյ Ինք., Դելավերի նահանգ, US
 (442) 21.10.2011
 (540)

Clear Proof

(511)
 դաս 3. կոսմետիկական միջոցներ. դեղերով
 չտոգորված մաշկի խնամքի միջոցներ. դեղերով
 չտոգորված մաշկը երանգավորող միջոցներ.
 մաշկը մաքրող միջոցներ. մաշկի լոսյոններ.
 մաշկը խոնավացնող միջոցներ, ընդգրկված 3-
 րդ դասում.

դաս 5. պատրաստուկներ կորյակների բուժ-
 ման համար. դեղերով տոգորված միջոցներ
 դեմքի մաքրման համար. դեղերով տոգորված
 պատրաստուկներ մաշկի խնամքի համար,
 ընդգրկված 5-րդ դասում:
 (740) Ալ. Նահապետյան

(210) **20111071** (111) **18289**
 (220) **29.08.2011** (151) **12.04.2012**
 (181) **29.08.2021**

(730) Նովարթիս ԱԳ, CH
 (442) 22.12.2011
 (540)



(511)
 դաս 5. դեղագործական պատրաստուկներ.
 դաս 10. վիրաբուժական, բժշկական, ատամ-
 նաբուժական և անասնաբուժական սարքեր ու
 գործիքներ, վերջույթների պրոթեզներ, աչքերի և
 ատամների պրոթեզներ. ոսկրաբուժական իրեր.
 նյութեր կարեր դնելու համար.

դաս 42. գիտական և տեխնոլոգիական
 ծառայություններ և հետազոտություններ և դրանց
 հետ կապված մշակումներ. արդյունաբերական
 վերլուծումներ և հետազոտություններ. համա-
 կարգչային ապարատների և ծրագրերի մշա-
 կում և կատարելագործում. իրավաբանական
 ծառայություն.

դաս 44. բժշկական ծառայություններ.
 անասնաբուժական ծառայություններ. կենդա-
 նիների և մարդկանց հիգիենիկ և կոսմետիկական
 ծառայություններ. գյուղատնտեսական, այգե-
 գործական և անտառային ծառայություններ:
 (740) Ա. Գալոյան

(210) **20111102** (111) **18290**
 (220) **06.09.2011** (151) **12.04.2012**
 (181) **06.09.2021**
 (730) Ակցիոներնո Դրոմեստովո «Բուլգարտաբակ-
 Հոլդինգ», BG
 (442) 07.10.2011
 (540)



(526) «SLIMS» բառն ինքնուրույն պահպանության օբյեկտ չէ:

(591) Նշանը պահպանվում է ծխախոտագույն, սպիտակ, դեղին, բաց և մուգ մանուշակագույն, բորդո, բաց և մուգ դարչնագույն և կանաչ գունային համակցությամբ:

(511) դաս 34. ծխախոտ. ծխելու պիտույքներ. լուցկի. գազի բալոններ վառիչների համար. ներ-ծծող թուղթ ծխամորճերի համար. սիգարետի, պապիրոսի թուղթ. վառիչներ. ծխախոտի քսակներ. ծխախոտային թղթի գրքույկներ, խոնավացուցիչով տուփեր սիգարների համար. լուցկու տուփեր. կայծքարեր. մեքենաներ սիգարների կտրման համար. սիգարների ծխափողեր. սիգարետների ծխափողեր. սիգարետների ծխափողերի ծայրակալներ. սիգարների և սիգարետների ծխափողերի սաթե ծայրակալներ. մոխրամաններ, թքամաններ ծխախոտի համար. ծխամորճի տակդիրներ. հարմարանքներ ծխամորճերի մաքրման համար. սիգարետներ, պապիրոսներ, սիգարիլներ. սիգարներ. անոթներ ծխախոտի համար. լուցկու տուփեր. ծամելու ծխախոտ. հոտ քաշելու ծխախոտ. ծխախոտամաններ. ծխամորճեր. գրպանի հարմարանքներ սիգարետները և պապիրոսները փաթաթելու համար. սիգարետի զտիչներ. առանց ծխախոտի պապիրոսի պարկուճի մասեր. արկղեր սիգարների համար. արկղեր սիգարետների, պապիրոսների համար: (740) Ա. Գալոյան

(210) **20111103** (111) **18291**
 (220) **06.09.2011** (151) **12.04.2012**
 (181) **06.09.2021**

(730) Ակցիոներնո Դրուժեստովո «Բուլգարտաբակ-Հոլդինգ», BG
 (442) 07.10.2011
 (540)




(526) «S» տառն ինքնուրույն պահպանության օբյեկտ չէ:

(511) դաս 34. ծխախոտ. ծխելու պիտույքներ. լուցկի. գազի բալոններ վառիչների համար. ներ-ծծող թուղթ ծխամորճերի համար. սիգարետի, պապիրոսի թուղթ. վառիչներ. ծխախոտի քսակներ. ծխախոտային թղթի գրքույկներ, խոնավացուցիչով տուփեր սիգարների համար. լուցկու տուփեր. կայծքարեր. մեքենաներ սիգարների կտրման համար. սիգարների ծխափողեր. սիգարետների ծխափողեր. սիգարետների ծխափողերի ծայրակալներ. սիգարների և սիգարետների ծխափողերի սաթե ծայրակալներ. մոխրամաններ, թքամաններ ծխախոտի համար. ծխամորճի տակդիրներ. հարմարանքներ ծխամորճերի մաքրման համար. սիգարետներ, պապիրոսներ, սիգարիլներ. սիգարներ. անոթներ ծխախոտի համար. լուցկու տուփեր. ծամելու ծխախոտ. հոտ քաշելու ծխախոտ. ծխախոտամաններ. ծխամորճեր. գրպանի հարմարանքներ սիգարետները և պապիրոսները փաթաթելու համար. սիգարետի զտիչներ. առանց ծխախոտի պապիրոսի պարկուճի մասեր. արկղեր սիգարների համար. արկղեր սիգարետների, պապիրոսների համար: (740) Ա. Գալոյան

(210) **20111104** (111) **18292**
 (220) **06.09.2011** (151) **12.04.2012**
 (181) **06.09.2021**

(730) Ակցիոներնո Դրուժեստովո «Բուլգարտաբակ-Հոլդինգ», BG
 (442) 07.10.2011
 (540)



(526) «SLIMS» բառն ինքնուրույն պահպանության օբյեկտ չէ:

(591) Նշանը պահպանվում է կապույտ, մուգ կապույտ, դեղին, ոսկեգույն և մոխրագույն գունային համակցությամբ:

(511) դաս 34. ծխախոտ. ծխելու պիտույքներ. լուցկի. գազի բալոններ վառիչների համար. ներծծող թուղթ ծխամորճերի համար. սիգարետի, պապիրոսի թուղթ. վառիչներ. ծխախոտի քսակներ. ծխախոտային թղթի գրքույկներ, խոնավացուցիչով տուփեր սիգարների համար. լուցկու տուփեր. կայծքաբեր. մեքենաներ սիգարների կտրման համար. սիգարների ծխափողեր. սիգարետների ծխափողեր. սիգարետների ծխափողերի ծայրակալներ. սիգարների և սիգարետների ծխափողերի սաթե ծայրակալներ. մոխրամաններ, թքամաններ ծխախոտի համար. ծխամորճի տակդիրներ. հարմարանքներ ծխամորճերի մաքրման համար. սիգարետներ, պապիրոսներ, սիգարիլներ. սիգարներ. անոթներ ծխախոտի համար. լուցկու տուփեր. ծամելու ծխախոտ. հոտ քաշելու ծխախոտ. ծխախոտամաններ. ծխամորճեր. գրպանի հարմարանքներ սիգարետները և պապիրոսները փաթաթելու համար. սիգարետի զտիչներ. առանց ծխախոտի պապիրոսի պարկուճի մասեր. արկղեր սիգարների համար. արկղեր սիգարետների, պապիրոսների համար:

(740) Ա. Գալոյան

(591) Նշանը պահպանվում է կապույտ, մուգ կապույտ, երկնագույն, մուգ դեղին և մոխրագույն գունային համակցությամբ:

(511) դաս 34. ծխախոտ. ծխելու պիտույքներ. լուցկի. գազի բալոններ վառիչների համար. ներծծող թուղթ ծխամորճերի համար. սիգարետի, պապիրոսի թուղթ. վառիչներ. ծխախոտի քսակներ. ծխախոտային թղթի գրքույկներ, խոնավացուցիչով տուփեր սիգարների համար. լուցկու տուփեր. կայծքաբեր. մեքենաներ սիգարների կտրման համար. սիգարների ծխափողեր. սիգարետների ծխափողեր. սիգարետների ծխափողերի ծայրակալներ. սիգարների և սիգարետների ծխափողերի սաթե ծայրակալներ. մոխրամաններ, թքամաններ ծխախոտի համար. ծխամորճի տակդիրներ. հարմարանքներ ծխամորճերի մաքրման համար. սիգարետներ, պապիրոսներ, սիգարիլներ. սիգարներ. անոթներ ծխախոտի համար. լուցկու տուփեր. ծամելու ծխախոտ. հոտ քաշելու ծխախոտ. ծխախոտամաններ. ծխամորճեր. գրպանի հարմարանքներ սիգարետները և պապիրոսները փաթաթելու համար. սիգարետի զտիչներ. առանց ծխախոտի պապիրոսի պարկուճի մասեր. արկղեր սիգարների համար. արկղեր սիգարետների, պապիրոսների համար:

(740) Ա. Գալոյան

(210) 20111105

(220) 06.09.2011

(730) Ալցիոներնո Դրուժեստովո «Բուլգարտաբակ-Հոլդինգ», BG

(442) 07.10.2011

(540)



(111) 18293

(151) 12.04.2012

(181) 06.09.2021

(210) 20111106

(220) 06.09.2011

(730) Ալցիոներնո Դրուժեստովո «Բուլգարտաբակ-Հոլդինգ», BG

(442) 07.10.2011

(540)

(111) 18294

(151) 12.04.2012

(181) 06.09.2021



(511)

դաս 34. ծխախոտ. ծխելու պիտույքներ. լուցկի. գազի բալոններ վառիչների համար. ներ-
ծծող թուղթ ծխամորճերի համար. սիգարետի,
պապիրոսի թուղթ. վառիչներ. ծխախոտի
քսակներ. ծխախոտային թղթի գրքույկներ,
խոնավացուցիչով տուփեր սիգարների համար.
լուցկու տուփեր. կայծքարեր. մեքենաներ սիգար-
ների կտրման համար. սիգարների ծխափողեր.
սիգարետների ծխափողեր. սիգարետների ծխա-
փողերի ծայրակալներ. սիգարների և սիգա-
րետների ծխափողերի սաթե ծայրակալներ.
մոխրամաններ, թքամաններ ծխախոտի համար.
ծխամորճի տակդիրներ. հարմարանքներ ծխա-
մորճերի մաքրման համար. սիգարետներ,
պապիրոսներ, սիգարիլներ. սիգարներ. անոթ-
ներ ծխախոտի համար. լուցկու տուփեր. ծա-
մելու ծխախոտ. հոտ քաշելու ծխախոտ. ծխա-
խոտամաններ. ծխամորճեր. գրպանի հար-
մարանքներ սիգարետները և պապիրոսները
փաթաթելու համար. սիգարետի զտիչներ.
առանց ծխախոտի պապիրոսի պարկուճի
մասեր. արկղեր սիգարների համար. արկղեր
սիգարետների, պապիրոսների համար:
(740) Ա. Գալոյան

(210) **20111107** (111) **18295**
(220) **06.09.2011** (151) **12.04.2012**
(181) **06.09.2021**

(730) Ալցիոներնո Դրուժեստվո «Բուլգարտաբակ-
Հոլդինգ», BG
(442) 07.10.2011
(540)



(526) «M» տառն ինքնուրույն պահպանության
օբյեկտ չէ:

(511)

դաս 34. ծխախոտ. ծխելու պիտույքներ.
լուցկի. գազի բալոններ վառիչների համար. ներ-
ծծող թուղթ ծխամորճերի համար. սիգարետի,
պապիրոսի թուղթ. վառիչներ. ծխախոտի քսակ-
ներ. ծխախոտային թղթի գրքույկներ, խոնա-
վացուցիչով տուփեր սիգարների համար. լուցկու

տուփեր. կայծքարեր. մեքենաներ սիգարների
կտրման համար. սիգարետների ծխափողեր.
սիգարետների ծխափողեր. սիգարետների
ծխափողերի ծայրակալներ. սիգարների և սիգա-
րետների ծխափողերի սաթե ծայրակալներ. մոխ-
րամաններ, թքամաններ ծխախոտի համար.
ծխամորճի տակդիրներ. հարմարանքներ ծխա-
մորճերի մաքրման համար. սիգարետներ,
պապիրոսներ, սիգարիլներ. սիգարներ. անոթ-
ներ ծխախոտի համար. լուցկու տուփեր. ծա-
մելու ծխախոտ. հոտ քաշելու ծխախոտ. ծխա-
խոտամաններ. ծխամորճեր. գրպանի հարմա-
րանքներ սիգարետները և պապիրոսները
փաթաթելու համար. սիգարետի զտիչներ.
առանց ծխախոտի պապիրոսի պարկուճի մա-
սեր. արկղեր սիգարների համար. արկղեր
սիգարետների, պապիրոսների համար:
(740) Ա. Գալոյան

(210) **20111126** (111) **18296**
(220) **13.09.2011** (151) **12.04.2012**
(181) **03.09.2021**

(730) Տակեդա Ֆարմասյութիքլ Քամփնի Լիմի-
թիդ, JP
(442) 22.12.2011
(540)

IPREZIV

(511)

դաս 5. դեղագործական պատրաստուկներ
մարդկանց համար:
(740) Ա. Գալոյան

(210) **20111127** (111) **18297**
(220) **13.09.2011** (151) **12.04.2012**
(181) **13.09.2021**

(730) Տակեդա Ֆարմասյութիքլ Քամփնի Լիմի-
թիդ, JP
(442) 22.12.2011
(540)

ИПРЕЗИВ

(511)

դաս 5. դեղագործական պատրաստուկներ
մարդկանց համար:
(740) Ա. Գալոյան

(210) **20111128** (111) **18298**
 (220) **13.09.2011** (151) **12.04.2012**
 (181) **13.09.2021**
 (730) Տակեդա Ֆարմասյութիքլ Քամինի Լիմի-
 թիդ, JP
 (442) 22.12.2011
 (540)

EDARBI

(511)
 դաս 5. դեղագործական պատրաստուկներ
 մարդկանց համար:
 (740) Ա. Գալոյան

(210) **20111131** (111) **18301**
 (220) **13.09.2011** (151) **12.04.2012**
 (181) **13.09.2021**
 (730) Տակեդա Ֆարմասյութիքլ Քամինի Լիմի-
 թիդ, JP
 (442) 22.12.2011
 (540)

ИНКРЕСИНК

(511)
 դաս 5. դեղագործական պատրաստուկներ
 մարդկանց համար:
 (740) Ա. Գալոյան

(210) **20111129** (111) **18299**
 (220) **13.09.2011** (151) **12.04.2012**
 (181) **13.09.2021**
 (730) Տակեդա Ֆարմասյութիքլ Քամինի Լիմի-
 թիդ, JP
 (442) 22.12.2011
 (540)

ЭДАРБИ

(511)
 դաս 5. դեղագործական պատրաստուկներ
 մարդկանց համար:
 (740) Ա. Գալոյան

(210) **20111132** (111) **18302**
 (220) **13.09.2011** (151) **12.04.2012**
 (181) **13.09.2021**
 (730) Տակեդա Ֆարմասյութիքլ Քամինի Լիմի-
 թիդ, JP
 (442) 22.12.2011
 (540)

NESINA

(511)
 դաս 5. դեղագործական պատրաստուկներ
 մարդկանց համար:
 (740) Ա. Գալոյան

(210) **20111130** (111) **18300**
